Ը ՏԱՐԻ — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 15 ՅՈՒՆԻՍ 1905 — ԹԻՒ 722

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1.50 »

Յանձնուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ վերջին երեսին համար 20 սանթիմ. երեքին առելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

—o—

Վաճառքի համար ձեռք 10 սանթիմ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեանս հասցեին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ (Bulgarie) Yarna

Պուլկարիոյ համար ձեռք 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք եւ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ»

ԻՆՉԻ ՄԵՆՔ ԷԼ ՁՈՒՆԵՆՔ

—oo—

Անցեալ յօդուածով մատնանշեցինք այն մեծ առաւելութիւնը որ Մակեդոնացի յեղափոխականները ստեղծել են իրենց ներքին գործերը կազմակերպութեամբ, համեմատաբար կարճ ժամանակում։ Ի հարկէ այն տարբերութիւնները որոնք գոյութիւն ունեն մեր երկրի և Մակեդոնիայի աշխարհագրական դիրքի և դրացի պետութիւնների տրամադրութեանց միջեւ բաւական խոշոր են և նպաստաւոր մակեդոնացիների համար, բայց և այնպէս այնքան արտակարգ չէին որ մենք չը կարողանայինք գոնէ Մակեդոնացիների ներքին իրական ուժի կէսը ստեղծել։

Ուրեմն ի՞նչի մենք էլ չենք կարողացել ներքին կազմակերպված գոնէ մասամբ միաձոյլ ոյժ ստեղծել։ Այս բացասական կացութեան բուն պատճառը գտնելուց յետոյ է, որ մենք պէտք է կարողանանք այն մէջտեղից վերցնել և մեր յեղափոխական կազմակերպութիւնը դնել այն հաստատուն հիմերի վրա, որոնք անհրաժեշտ են ու և է ժողովրդական շարժում կօրաւոր և յարատեւ կերպով առաջ տանելու համար։ Այդ զլխաւոր պատճառներից առաջինը այն է որ մեր յեղափոխական կազմակերպութիւնները ամփոփ, լուրջ, հաստատուն տեղեկութիւններ չունեն այն երկրի և ժողովրդի մասին, ուր ուզում ենք ապաստամբութիւն առաջ բերել։ Իսկ այս դառն իրականութեան պատճառը այն է որ մենք լուրջ, տեղական պայմանների, ժողովրդի հոգեբանութեան խորքերը թափանցող, նիւթապէս բոլորովին ապահովված ներքին ագիտատորներ չենք ունեցել, կամ թէ ունեցել ենք շատ քիչ, որոնք այսօր մեր 15 տարեայ գործնական յեղափոխական պատմութեան մէջ իրարու փայլուն բացառութիւններ պէտք է մնան միեւնոյն ժամանակ դրական ապացոյց որ մենք հաւաքական կօրեպ ուժ չենք կարողացել ստեղծել։ ու այդ փայլուն բացառութիւններն էլ միշտ դրված են եղել այնպիսի նիւթական անապահով վիճակի մէջ, որ հազիւ կարողացել են իրենց շուրջը մի քանի մարդիկ հաւաքել և ժամանակաւոր փոքրիկ ուժ ստեղծել իրենց գտնված շրջանում, որը կեանք է ունեցել միայն բացառիկ ագիտատորի գոյութեան ժամանակամիջոցի չափով։ Վերջինիս ոչնչանալու—բանտարկվելու, սպանվելու հետ միասին ոչնչացել է և այդ ուժը, ու նորեկը, եթէ եկել է, պարտաւորված է եղել կրկին մտմբտալ հաւաքական մի փոքրիկ ուժ ստեղծելու համար։

Մենք ունեցել ենք փայլուն ցոյցեր, ունեցել ենք պարտիզանական փայլուն ընդհարումներ, ունեցել ենք փայլուն տերրորական գործեր, բայց երբէք չենք ունեցել կօրաւոր, լուրջ ինտիլիգէնտ, գործի ամբողջ ծանրութիւնը և նրբութիւնները ըմբռնող մի կեդրոնական կոմիտէ երկրի մէջ որը յարատեւ գոյութիւն ունենար և չնորհիւ այդ գոյութեան կարողանար կարգապահ, լուրջ, խրոխտ յեղափոխական կազմակերպված ուժ ստեղծել։ Մեր յեղափոխական կոչված մատաղ ուժերի ամենախոշոր քանակութիւնը մեծ տեղաւորվել է արտասահմանում, արտասահմանեան գրաւոր և բերանացի պրոպագանդան առաջ տանելու համար, որից երկրի ժողովուրդը յեղափոխական տարրը համարեայ թէ չէ օգտվել—որովհետեւ Բուլգարիայում, Եգիպտոսում, Ամերիկայում արտասանված ճառերը երկիր չեն հասնում, իսկ յեղափոխական թերթերն էլ գրեթէ երկիր չեն մտնում։ Արտասահմանը իր ապատ մթնոլորտով, իր դիւրին պայմաններով, դիւրաւ փառաւորվելու հրապոյրով գրաւել է շատ շատերին, մանաւանդ այնպիսիներին որոնք թէ ուզում են յեղափոխական տիտղոսը կրել, թէ հանգիստ ապրել, ու իր պրոպագանդայով ստեղծած միջոցների մեծագոյն մասը վատնել արտասահմանեան պրոպագանդան և նրա փայլուն ու անփայլ ներկայացուցիչներին պահելու համար։

Ու այսօր մենք տեսնում ենք որ ունինք մի քանի յեղափոխական և մեր գատը պաշտպանող հայերէն և օտար թերթեր, բայց երկրում չունենք կօրաւոր, կազմակերպված կազմակերպութիւն. մինչդեռ Մակեդոնացիները արտասահմանում չունեն սխալ գործունէութեան այդ փայլուն պլպղուն նշանները, բայց ունին ներքին ուժեղ մարմին, որը մաքառում է թուրք կառավարութեան, թուրք ամբոխի, սերբ և յոյն հրոսակների դէմ ու միևնոյն միջոցին իր ուժը գիտակցողի վստահութեամբ յայտարարում՝ իր գատի արտաքին փայլուն պաշտպաններին.

—Մենք ձեր հրամանները կատարելու տրամադրութիւն չունինք. ո՞վ ուզում է գործել, թո՛ղ բարեհաճի գալ այստեղ մտնի մեր շարքերի մէջ և ենթարկվի։

Ի հարկէ արտաքին գործունէութիւնն էլ անհրաժեշտ. սակայն նա անպէտք է, աւելորդ իսկ է եթէ նոյն համեմատութեամբ, ներանից շատ անգամ աւելի ճիգ չէ դարձնվում ներքին կազմակերպութիւնը զօրեղացնելու, որ պէսզի յեղափոխական գործունէութեան ղեկը կենտրոնանայ երկրում ու ազատվի դուրսը գտնվող կիսայեղափոխական, կամ յաճախ բոլորովին ոչ յեղափոխական քարոզիչների, գործիչների ձեռքում, որոնց համար Պրէսան ալի մի հայասիրական ճառը, Կլէմանսոյի մի յոդուածը նշան է թէ հայ յեղափոխութիւնը իր զօրութեան գագաթնակէտին է հասել։

ՎԱՐԴՕ

—◆◆—

ՆԱՄԱԿ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ

—)o(—

ԷՐԶՐՈՒՄ, 20/12 մայիս

Ահա շուտով երկու շաբաթ կը լինի որ բժիշկ Զավրեվի միսսիան եկել է այստեղ։ Նա բաղկացած է վեց անձերից։ Ասում են թէ մի քանի օրից յետոյ պէտք է մեկնի դէպի Մուշ և Սասուն, այստեղ հաստատում են, բժշկական այդ խումբը պէտք է ձրիաբար օգնէ բոլոր հիւանդներին, առանց ցեղի և դաւանութեան խտրութեան, ինչպէս և անում է այստեղ։ Կարծում են որ բժիշկ Զավրիեվը որոշած է հայ կարօտեալներին նիւթապէս նպաստել նրանց թշուառութիւնը մի քիչ ամոքելու համար։

Ցանձնախումբը իր հետ բերել է 36 կապոց դեղ, ամեն տեսակի։

10 օրից իվեր Ֆանարճի փողոցի մէջ նկատվում է ամեն առաւոտ 400 500 մարդ հայ և թուրք երկու սեռի, որոնք Զավրիեվից բժշկական օգնութիւն են խնդրում։

Ամենքն էլ ընդունվում են վրսեմ բժշկից. որը խնամքով քննելուց յետոյ դեղապիր է տալիս գնալ դեղ վերցնելու դեղարաններից, միշտ ձրի, որովհետեւ բժիշկը ինքն է վճարում այդ ծախքերը։ Այդպիսով նա տնտեսում է իր տրամադրութեան տակ եղած դեղերը, որոնք նա պահում է Մուշի և Սասունի համար։

Իր ժողովրդականութիւնը անսահման է. ամենահեռաւոր գիւղերից սայլերով հիւանդներ են բերում, որոնք փողոցի մէջ սպասում են մինչեւ երեկոյ որ իրենց հերթը գայ։

Աչքի զարկողը այն է որ հայերը և թուրքերը միասին կատարեալ կարգապահութեամբ, սպասում են հայ բժիշկի դրան առջեւ որ նրանց ամենքին էլ ընդունում է նոյն բարեհայեցողութեամբ և նոյն ուշադրութեամբ։

Նա ժամանակաւոր մի բնակա-

ման է վարձել։ Մի սենեակում ինքը ընդունում է ներքին հիւանդութիւններ ունեցողներին, իսկ միւսում իր օգնական պ. Ղազարովը աչքացաւ ունեցողներին։ Վերջինս օրական երկու հարիւր հոգի է խնամում։ Ոստիկանութիւնը ամբոխի խաղաղ վարմունքից հանգիստ, ոչ մի հսկողութիւն չէ կատարում։ Հիւանդների շարքում գտնվում են և գեներալներ ու ուրիշ զինուորականներ որոնք առանց բոլորի իրենց հերթին են սպասում. որովհետև բժիշկը տները չէ այցելում, բացի ծանր հիւանդութեան պարագայից։ Հարուստի և աղքատի հանդէպ միեւնոյն վերաբերմունքն է։ Սա մեծ միխիթարութիւն է դժբախտների համար։

Ժողովրդականութիւնը այնքան մեծ է որ դժուար է գուշակել թէ նա պիտի կարողանայ հեռանալ Էրզրումից դէպի Մուշ և Սասուն ուր լաւ հասկանալի անհամբերութեամբ սպասվում է։ Եթէ չը յաջողի գիշերը հեռանալ քաղաքից, վախենալու է որ այստեղի ժողովուրդը ցերեկը բաց չը թողնէ իր սիրելի բժշկին։ Ցոյս ունեն դեռ մի ժամանակի համար պահել։

Բժիշկ Զավրիեվի անձնուիրութիւնը և մարդասիրութիւնը գրաւած են նոյն իսկ թուրք կառավարութիւնը, որը իր կողմից, վարկը բարձրացնելու համար, քաղաքային երկաթ բժիշկների հրամայել է շաբաթը երեք օր ձրիաբար հիւանդներ ընդունել քաղաքային հիւանդանոցում։

«Պրօ Արմենիա»

Գեղեցիկ և պաշտելի գործ։

թէեւ շատ բնական պարտաճանաչ, ժողովրդական ցաւերին գիտակցող բժշկի համար։ Վերջապէս մեր բազմաթիւ հայ բժիշկների մէջ Զավրիեվ և Ղազարով ներկայանում են իբրեւ մի գեղեցիկ, քաջալերող բացառութիւն, ապացուցանելու համար թէ կամքը և բարեացակամութիւնը կարող են միշտ յաղթահարել և մարդասիրական զգացմունքներով տոգորված բժիշկներին նետել հիւանդութիւնների դժոխքում չարչարվող, չքաւոր հիւանդ մարդկանց օգնելու համար։

Պատիւ երկու պարոններին և ակնածելի յարգանք։ Ու որչափ կազդուրիչ են այդ բացառութիւնները մեր փչացած, նիւթապաշտ բժշկական շրջանում։ Այդ բացառիկ օրինակներն են որ մարդկանց ստիպում են հաւատալ թէ աշխարհում միայն չարութիւնը, եսասիրութիւնը և դէպի իր նմանները սառն անտարբերութիւնը չեն թագաւորում։

ՃԱԲՈՆԱՑԻ ԵՆԹԱՍՊԱՑԻ ՄԸ ԻՐ ԿՆՈՋԸ ՈՒՂՂԱԾ ՆԱՄԱԿԸ

Ճաբոնական արտակարգ յաղթութիւնները բոլոր Եւրոպացիները կ'ստիպեն մանրամասնօրէն ուսումնասիրել ճաբոն զինուորին նկարագիրը, որ իր զօրաւորութեամբ արտակարգ տեղ մը գրաւեց։ Ու այսօր եւրոպական մամուլը առիթը չի փախցներ ճաբոնական պարզ զինուորի կեանքին մանրամասները իսկ աշխարհին ծանօթացնել։

Այս պատճառով է որ մենք ալ աւելորդ չենք սեպեր մեր ընթերցողներուն ներկայացնել ճաբոնացի ենթասպայի մը հոգեկան վիճակը պատերազմի դաշտին մէջ իր կնոջը ուղղած նամակէն քաղելով բնորոշող կէտեր։

«Թանկագինս, կը գրէ նամակագիրը, շատ կը խնդրեմ որ միշտ հետեւիս հետեւեալ խորհուրդներուս։

1) Ոչ ոչէ նուէր չընդունիս, որովհետեւ ատով կարատաւորես ամուսինդ։ 2) Պատերազմի դաշտէն ղրկած նամակներս լաւ պահէ և ամէն մարդու կարդալու չը տաս։ 3) Մտաբեր է որ Շիշիմայի մէջ մեր բաժանումը մեր վերջին մնաս բարովն էր, ճիշդ այնպէս որ իմ մեռած մարմինս տաճար ղրկած ես ու իբր թէ պատերազմէն եկած վերջին տեղեկութիւնները քեզի կը յայտնեն որ արդէն դրախտը հասած եմ. 4) Մի՛ սպասեր որ պիտի վերադառնամ այլ մտածէ որ մեռեր եմ պատուաւոր և արժանաւոր կերպով. 5) Երբ մահս իմանաս վիշտդ զսպէ. 6) Մահուանէս վերջը ապրէ՛ այն թոչակով որ կառավարութիւնը պիտի տայ և յարգէ յիշատակը իմ նախնիքներուս 7) Բոլոր գործերուդ մէջ միշտ մտքդ բեր որ զինուորի կին ես։ 8) Զը մոռնաս այցելել կռուի դաշտին մէջ ինկածներու ընտանիքներուն ցաւակցութիւններդ յայտնելու համար։ 9) Ընդմիշտ սիրով եղիր ծնողացդ և ծերունիներու հետ։ 10) Իմ պատուաւոր անունս, որ քեզի տուած եմ մեր ամուսնութեամբ, արատաւորող բան մը չընես։

Այս նամակին հեղինակը Եամազակի Ունօցուկ անունով ենթասպան է։

Նախկին լիտօգրաֆ, Թօքիոյի մէջ։ Ան Քօրէայի կռիւներուն մէջ աչքի զարկաւ անով որ, վիրաւորուած ըլլալով հանդերձ իր ընկերոջ կեանքը ազատեց։ Մայրբկանի պաշարման միջոցին գլխու ծանր վէրք մը կ'ստանայ և կը մեռնի վիրաբուժական կայանը տարուած պահուն։

Այս նամակը յստակօրէն կապացուցէ թէ ճաբոնացի զինուորը որոշ գիտակցութիւնը ունի դէպի ընտանիքը, ընկերը, հայրենիքը ունեցած պարտականութեան մասին և հայրենիքի սիրուն մահուան դաշտը գացած գերագոյն բոպէին իսկ չի մոռնար այդ պարտականութիւններէն և ոչ մին։

Եւ կը զարմանան որ ճաբոնացիք ռուսին կը յաղթեն—ինչպէս չը յաղթեն—երբ դիմացինի հարիւրին մէկը իսկ այդ գիտակցութիւնը չունի։

ՌՈՒՍԻՈՅ ՀԱՅՐԱՑԻՆ ԿԱՐԾԻՔԸ ՑԱՐԻ ԽՕՍՔԵՐՈՒ ՄԱՍԻՆ

—○○—

Ռուսական մամուլը մեծ ուրախութեամբ դիմաւորած է ցարին ճառը ուղղուած զեմսթվոյի ներկայացուցիչներուն։ Ն. Վ.» ընդունելութիւնը պատմական անցքը համարելով կը յայտարարէ։ «Այժմ ամբողջ Ռուսիա պիտի գիտնայ թէ ցարը կը խորհի նոյն կարիքներու մասին, կը տխրի նոյն վիշտերով, կապրի նոյն յոյսերով։ Ընդհանուր ջերմ սէր դէպի տանջուող հայրենիքը, ընդհանուր հաւատք որ Ռուսիա վերանորոգուած պիտի դուրս ելլայ իրեն վիճակուած փորձութիւններէն—ահա կենսական կապը, որը բաւական ամուր է ամբողջ Ռուսիոյ և ցարին միութիւնը ամրապնդելու համար։ Ատէ հաստատուն հիմքը, որուն վրայ պիտի հաստատուի նեղ, փոխադարձ վստահութեամբ լի յարաբերութիւնը ցարին և զեմսթվոյին մարդոց միջեւ։ „Նաշա ժիզն», „Բազվէտ», «Սին Օտեչեստվա» կը շեշտեն այն փաստը որ ցարին ներկայացող պատգամաւորութեան անդամներէն շատերը, որոնք ցարէն ընդունուեցան, քիչ մը առաջները իրեւ խռովարարներ կընդունուէին եւ իրենց ուսերուն վրայ փորձած էին Բիւրօկրասիի լուծին ամբողջ ծանրութիւնը իրենց գործունէութեան համար, որուն միակ շարժառիթն էր իրենց դէպի հայրենիքը ունեցած ջերմ սէրը։

Բայց ամենէն ուշագրաւն է յայտնի, որ ճաբոնացիք ռուսին կը յաղթեն—ինչպէս չը յաղթեն—երբ դիմացինի հարիւրին մէկը իսկ այդ գիտակցութիւնը չունի։

Ա. ԱՍՖԻՏԵԱՏՐՈՎ

—⁘—

ՎԻԿՏՈՐԻԱ ՊԱՎԼՈՎՆԱ

—⁘—

(Տօնախմբութիւն)

—)o(—

(Գրագիտ յիշողութիւններից։ Ամրան արկածներ քաւական տարօրինակ հասարակութեան մէջ)

—)o(—

(Թարգմ. ռուսերէնից)

38

Ը.

(Շար. նախորդ թիւեն)

Եւ մինչեւ այդ սէզօնի վերջը ամբողջ քաղաքը ինձ համարում էր Օնէսիմ Նիկոլաեւիչի, պատուաւոր քաղաքացու սիրուհին. բայց մտերմութեան չնչին նշոյլն անգամ չը կար։

Կարծեմ կը հաւատաք որ ես չեմ ստում. ես կեանքիս բոլոր անպատուութիւնները ձեզնից չը թագցրի. ուրեմն եւ այդ պստիկ բանն էլ չէի թագցնի։

Իմ բիտս բանում է այն կսրգի մարդկանց մասն, որոնք թոյլ են տալիս համոզվել իրենց եւ վերջ ի վերջոյ տաք, անկեղծ բարեկամութիւնը դերադասում են ցուրտ, կեղծ անբարոյական սիրուց։ Այնքան յայտնվում էր որ, հիմա ես կարծում եմ թէ բոլոր առողջ եւ ոչ տխմար այր մարդիկ այդպէս են։ Ինքզինքը լաւ պահելով, համբերութեամբ եւ բանականութեան փաստերի ժողովելու ընդունակութեամբ նրանց միշտ կարելի է դնել լաւագոյն յարաբերութիւնների մէջ։ Ի հարկէ եթէ ամբողջովին տարփոտ չէ, ինչպէս Աֆանասիչը։ այս տեսակին միայն պէտք է վանել վտանգաւոր չան նման։ Ի հարկէ ես նախկին Աֆանասիչի մասին եմ ասում. նկատեց Վիկտորիան անատարբերութեամբ եւ անկեղծարար ծիծաղեց։

—Բայց ասե՞լ ձեզ. իմ այն այս կողմ ընկած միջոցին, ինչպէս ապրելու համար, ի՞նչ անել քիչ մնաց որ ես Արինայի դեղագիրը գործադրէի։

—Այսինքն ինչպէ՞ս։ միտքը չը հասկնալով հացրի ես։

—Փիչ մնաց որ ամենաօրինաւոր ամուսնութիւն կնքէի Աֆանասիչի հետ։ Ի՞նչ է. զարմանալի է՞։

—Խոստովանում որ այո։

Վիկտորիան չարունակեց տխուր և չար կերպով ծիծաղելով։

—Զը կարծէք որ դա, ինչպէս գիտուններն են ասում ընկնաւորութեան անդրադարձումն էր որով սատանան մեզ իրար էր մօտեցրել։. Ոչ, ոչ, այստեղ գործը բոլորովին ուրիշ էր։ Ես Մոսկվայում ծանօթացայ մի քահանայի հետ, համալսարանական եւ ազնուական ծագումով. հոգեւոր կոչում ընդունելու համար արհամարել էր փառաւոր ասպարէզը։ Խելացի, զարգացած, ասկէտ եւ միտք էր։ Խօսած մթնոցին մարդ յափշտակվում էր, մի խօսք բաց թողնել չէր ուզում. Սավանորոլ, Ոսկեբերան էր։ Մի անգամ նա ինձ շատ զգացրեց եւ ահա ես իմ արկածը ամբողջովին ինչպէս հիմա, նրան պատմեցի։ Ու ահա նա այդտեղ սկսեց երգել ինձ երկու սեռերի յարաբերութեանց խորհրդաւորութեան մասին թէ ինչ է երեխան եւ ինչ միստիք անխորտակելի կապեր է ստեղծում հոր եւ մոր միջեւ։ Կարճատեւ բայց մեծ ազդեցութիւն ունեցաւ ինձ վրայ. նեարդերիս բոլոր հանգոյցները քանդում էր։

—Եւ նա ուզեց որ դուք ամուսնանայի՞ք Աֆանասիչի հետ. հարցրի ես։

Այո, նրա կարծիքով, հիմա ես արդէն խորհրդաւորապէս Աֆանասիչի կինն եմ եւ նրան եմ պատկանելու՝ եւ յաւիտենականութեան մէջ, ու ուրիշի կինը դառնալ չեմ կարող եւ իրաւունք էլ չունեմ եւ մեզ երկուսիս էլ, որ նախախնամութեան դէմ ըմբոստացել ենք, մարդկային խելքով ու հպարտութեամբ, հաշիւ կը պահանջվի։ Նրա թէօրիան այն էր որ կեանքը մարդին տրված է չարչարվելու համար եւ դրա համար մեղքը մեզ հասնում է այն տեղ, ուր բոլորովին անսպասելի է, որպէս զի մենք կարողանանք գտնել ապաշխարութեան չարչարանքը մաքրվելու համար։ Ես իբր թէ չեմ հասկանում ոչ ինքս ինձ եւ ոչ էլ մեղքս։

Մեղքը յանցանքի համար է դրրված. իմ թեթեւ տարփածութիւնս պէտք է ներվի ամուսնութեամբ, մայրական ծանր պարտականութիւններով։ Իմ առջեւ գտնվում է քրիստոնէական — երեխաս դաստիարակելու եւ փրկելու պարտականութիւնը. ինչպէս նաեւ հորը մարդ դարձնելու։ միթէ այդ պարզ ապացոյց չէ որ մեղքը ձեզ, այդպէս դեղեցիկ եւ հպարտ ստիպել է ընկնել ընկած եւ արհարամարված մարդու տիրապետութեան տակ։ Ձեզ գթու-

տարարութիւնը «Ռուսկիա Վեդեմոստի» ազատական թերթին, որը երկար տարիներէ իվեր բաւական բարձր բռնած էր Ռուսիոյ ազատամիտներուն դրօշակը, որուն խմբագիրներէն մին էր եւ մեր ազգակից հանգուցեալ հռչակաւոր Զանչեանը։

Այդ թերթը հետեւեալը կը յայտարարէ.

«Ճամբան, որով անցաւ Ռուսիա այս վերջին տարիներս, իրօք չատ երկար է։ Զեմսթվոյին ներկայացուցիչները երբեմն ցարին ներկայ ըսածներէն բոլորովին տարբեր խօսքեր կը լսէին։ Այն ժամանակ կըսուէր թէ ժողովրդին պետութեան կառավարելու մասնակցիլը ցնորքէ. իսկ այսօր այդ ցնորքին իրագործումը ցարին ամենօրեայ խոհերուն նիւթն է։ Ցնորքը իրականութեան վերածուած է եւ ամբողջ Ռուսիան կը խնդրէ անոր գործադրումը»։

* * *

Ազատամիտ թերթին այդ խնդիրը արդեօք իրը պահանջ պէտք է ընդունի՞լ. ցարերը խնդրանքով իրենց իրաւունքները բաժնել չեն սիրեր. ու կը զիջանին երբ կըմբռնեն թէ «խնդրանք» խօսքը այս տեսակ պարագաներու մէջ պահանջել կը նշանակէ։

Արդեօք ռուս ժողովուրդը պահանջելու չափ դիմադրակտն ուժը կզգա՞յ իր մէջ. այդ ապագան պիտի ցուցնէ։

Իհարկէ մենք ալ ամբողջ ռուս ազատական տարրին հետ կը ցանկանք որ ցարի խօսքերը գործնականապէս իրականութեան վերածուին, եւ ռուս թշուառ, խաւարի աղքատութեան մէջ ընկղմած միլիոնաւոր ժողովուրդը վերջապէս կարենայ ինքն ալ մասնակից ըլլայ իր բաղդը տնօրինող գործերու կարգադրման։

ԿՈՎԿԱՍԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Յունիս 9/22 Բեթերսպուրկէն «Թան»ի կը հաղորդեն հետեւեալը՝

«Կը յայտարարեն որ (Երեւանի Նահանգին մէջ) Նախիջեւան նոր կոտորածներ տեղի ունեցեր են։ Այս գաւառի բոլոր հայերը լիովին կործանուած են։ Բնակութիւնները աւերուած և հրդեհուած են. ունեցած չունեցածնին թալնուած է. հունձքերը աւերուած են. անասուններնին քշուած տարուած, ինչ որ դաշտերուն մէջ կար լքուելով կորսուած է։ Եկեղեցիները և դպրոցները աւերուած և թալնուած են, սուրբ պատկերները պատռուած և փշրուած։ Հատմիվար գիւղի եկեղեցիին սեղանը, երեսն իվար դարձուցած են։ Վարինճայի եկեղեցիին մասունքները գողցուած են։

Բատամլու գիւղին 800 քրիստոնեայ բնակիչները և քահանան բռնի իսլամ դարձուցած և թրաշած են։ 11 պատանիներ կտոր կտոր ըլած են. ու եկեղեցին մզկիթի վերածած։

Ճագրակ գիւղի մէջ կիները բռնաբարուած են իրենց ամուսիններու և զաւակներու աչքերուն առջեւ։ 37 այր մարդոց գլուխներ կտրած են իրենց կիներուն առջեւը։

Այս սարսափները մասամբ արդիւնք են բրովոքութիւններու, որոնք հրաշալի հող կը գտնան Ռուսիոյ բրտութեան, տգիտութեան և գազանութեան մէջ ընկղմած թաթարներու մէջ իրենց գրգռումներով։

Միւս կողմէն ալ այս բրովոքութիւնները կը քաջալերուին և կը հովանաւորուին նահանգային վարչութեան կողմէն։

Կը հաւաստիացնեն թէ իշխան Լուի Նափոլէոնի յանձնուած է Երեւանի նահանգին մէջ կարգը վերահաստատել։ Ան արդէն Թիֆլիզէն մեկնած է Եր. Երեւանի նահանգ։

ԿՈՎԿԱՍ

Վերջին տեղեկութիւններ

Յունիս 12 ին Թիֆլիզէն կը հեռագրեն հետեւեալը։ 70 քրտէ բաղկացած հրոսախումբ մը յարձակեր է Բիրալու գիւղաքաղաքին վրայ և 500 գլուխ տաւարտարեր է։ Վաշտ մը հեծելազօրք և ոստիկաններ, ոստիկան սպայի մը առաջնորդութեամբ հալածելով այդ քիւրտերուն անոնցմէ 16 հոգի և երեք թաթար սպանելով ու երկուսը ձերբակալելով յափշտակուած անասունները ետ դարձուցեր է։

Ուդէն գիւղաքաղաքին մօտերը խաղախները հասեր են 150 հոգիէ կազմուած հրոսախմբի մը որոնցմէ չորսին սպաներ, մէկը վիրաւորեր և 31 հոգի ձերբակալեր են։

Ուրիշ տեղ խաղախ ոստիկանութիւնը ձերբակալեր է 62 հայ, որոնք միւսիւլմաններու տները կը թալէին։

Ինչպէս կերեւի հայի դիմադրութեան ու վրիժառութեան այս դէպքերն են որ ռուս կառավարութեան ստիպեր են թաթարները և քիւրտերը հալածել։ Ուրեմն հայերուն կը մնայ դիմադրութիւնը իր բարձրագոյն աստիճանին հասցնել։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

. . Խմբագիր

Փարիզի Հայ Ուսանողական Միութեան Դիւանի կազմի մէկ մասը ապօրինի միջոցներով եւ զեղծումներով հակառակած ըլլալով Միութեանս յունիս 6ի ընդհանուր ժողովին մէջ մեծամասնութեամբ ընդունուած նպատակին, Միութիւնս այդ անձնաւորութիւնները եւ հաւախոհները հեռացուած համարելով, ձեռնարկեց իր դիւանական կազմի լրացումին, պահելով «Փարիզի Հայ Ուսանողական Միութիւն» տիտղոսը։

Ընդունեցէք մեր խորին յարգանքները.

Ի դիմաց Փարիզի Հայ Ուս. Միութեան դիւանի

Նախագահ — Քարտուղար

Յով. Աղամեան — Հր. Ալեանաք

21 յունիս 1905

Փարիզ

ՀՈՒՆԳԱՐԻ ԵՒ ՃԱԲՈՆ

Հունգարացիք ոսկեայ սուր մը պատրաստելով կը պատրաստուին մասնաւոր պատգամաւորութեամբ մը ղրկել Թօքիա այդ սուրը կայսեր յանձնելու որ ան ալ Օյամային յանձնէ։

Այդ առթիւ ունգարական երեսփոխան Քարլ Էթվէշ Վիէննայի ճաբոնական դեսպանին նամակ մը գրած էր, որուն դեսպանը հետեւեալ նամակով պատասխանած է։

«Ցարգելի պարոն, պատիւ ունեցայ ստանալու Ձեր մայիս 23 թուակիր նամակը, որով կը հաղորդէք ինձ թէ ունգարական պատգամաւորութիւն մը ձեր առաջնորդութեամբ կուզէ մեկնիլ Ճաբոնիա կայսեր շնորհաւորելու եւ մարաջախտ Օյամային պատուոյ սուր մը նուիրելու ունգար ժողովրդի կողմէն։ Կը շատապիմ այդ առթիւ արտայայտել իմ ամենանկեղծ շնորհակալիքս ձեր համակ

թիւնը ցոյց է տրված, Քրիստոսը իր երեխաներից է սպասում. գիտցէք այդ գթութիւնը գործեցնել ձեր մէջ եւ նրա կամքը կատարելատում էր նա։

Այդպէս շարունակ երգելով, երգելով հիպնօղացրեց ինձ. էլ կամք չը մնաց։ Վճռեցի անեմ այնպէս, ինչպէս պատիրում է իմ Սավանարոլը. գթութիւն էլ կը զարթեցնեմ սրտումս, զոհողութիւն էլ կանեմ ու կեանքի խաչն էլ կը վերցնեմ ուսերիս վրա։

Կեանքը կոտրել պէտք է, կը կոտրեմ. ու ես օրհնված մեկնեցի հարազատ Պաղեստինս. գիւղս, մեր տունը չը գնացի. իջայ նահանգային քաղաքում։ Իվան Աֆանասիչին տունս ծախել տալու պատրաստակով քաղաք բերել տուի, այն ժամանակ դեռ այդ ժառանգութիւնս կորած չէր. նա եկաւ... բայց հենց որ տեսայ նրան, բոլոր խաչերը, ողորմութիւնները եւ զոհողութիւնները ճերմակ աղաւնիների պէս գլխից դուս թռան...

Սավանարոլի դասերի հիման վրա մտածում եմ... սատանան չփոթեցնում է. հպարտութեանս փորձութիւնն է. պէտք է յաղթահարեմ ինձ, պէտք է լինեմ հեզ. քաղցրաբարոյ, պայծառ, ինչպէս սիրում էր արտայայտել Սավանարոլը։ — Ինչու դուք մութ էք. պայծառ եղէք։

Զորս օր ես ինձ պայծառացրի. բայց Աֆանասիչը իմ մետաֆիզիքան պայծառութիւնից մի բան չէր հասկանում եւ պարզութեամբ մտածում էր որ ես կրկին բարիացել եմ եւ ուզում եմ ողորմութիւնս վերսկսել. ու այդ ուղղութեամբ էլ սկսեց վարվել, շուրջս դառնալ, հոհրոալ։ Միշտ արտաքինով հաճոյալի չէր. իսկ երեք տալվան մէջ, որ ես չէի տեսել, բոլորովին ընկել էր, յիմարացել. գլուխը մերկացել։ Հրոհռում է միշտ, ամեն մի խօսքում, շարժվածքում, նայուածքում նկատվում են ինքզինքը զսպող ընկած մարդու միմոսութիւնը խղճուկ զգայնութիւնը։

Տեսնում եմ որ անելիքը ոչ միայն աղտոտ է այլեւ չափազանցօրէն յիմար։ Այսպիսի մէկի հետ ամուսնանա՞լ. Ոչ հայր Սավանարոլ. փախուկ էք փռում. բայց քնանալու համար չատ կոշտ է։ Այստեղ ոչ մի սխրագործութիւն կայ եւ ոչ մի ողորմագործութիւն կարելի է արտաբերել. այլ միայն կը կապվեմ մի անբարոյական ծերուկի հետ, որ օրէ օր պէտք է թունաւորէ կեանքս, սրբապղծէ թէ մարմինս եւ թէ հոգիս իր լիրբ կամքով եւ արբեցողի ցանկութեամբ։

Ու այդ պարագային ես այնպէս կատաղեցի իմ Սավանարոլի դէմ, եւ ինձ դէմ, որ այսպէս յիմար եմ զտնվել եւ ականջներս կախել անուշ խօսքերի տակ, եւ իսկոյն Աֆանասիչին իր տեղը ղրկեցի։

Իսկ Արինան որչափ սկսեց ծաղրել ինձ, երբ գիւղ վերադառնալով պատմեցի նրան այդ բոլորը։

—Էհ, հիմա, ինչի՞ Աֆանասիչին միշտ ձեր աչքի առջեւ էք պահում, ինչ հաճոյք, հարցրի ես։

Վիկտորիան անտարբերութեամբ ուսերը շարժելով պատասխանեց.

—Ո՞ւր գնայ. իր փոքրիկ կալուածքը վաղուց կերել է. ոչինչ ունի. ի հարկէ նրան տեսնելու հաճոյքը մեծ չէ։ Բայց որ դուրս անեմ ու գնայ ցանկապատի տակ սատկի-սիրտ չեմ անում։ Այնուամենայնիւ ինչպէս կուզէք, ես չեմ համարձակվում ասել որ նա ինձ համար բոլորովին օտար է... Այո, բայց ոչ դուք, այր մարդ էք, ինձ հասկանալ չէք կարող, այդ միակ մեր կանանց յատկանշական զգացմունքն է... ինչ որ լինի նա... չէ ո՞ր ես պատկանել եմ նրան։ Այդ չէ մոռացվում. ինչ որ մնում է, ինչ որ թել ձգվում է։

—Թել, այդ լաւ. բայց նա կարող է ձեզ դիւրութեամբ ոչ յարմար դրութեան մէջ ձգել։

—Չի համարձակվի. ինձնից, ինչպէս դուք հիմա տեսաք, ինչպէս կըրակից վախենում է Արինայից աւելի շատ. ամբողջովին նրա ձեռքումն է գտնվում։

—Սակայն այսօրեան միջադէպը....

Վիկտորիա Պավլովնան չարածի նման ձեռքերը տարածեց.

—Ուղղակի զարմանալի է, թէ ի՞նչ է պատահել հետը։ Այդ դեռ պէտք է քննել թէ Բուրունը ինչ միջոցով կարողացաւ նրան խօսել տեսել։ Որ Աֆանասիչն է Ֆենեայինը ցոյց տուել Բուրունին, այդ դեռ ես երեք օր առաջ գիտէի. բայց որ Աֆանասիչն է պատմել Ֆենիայի մասին, այդ նորութիւն է։ Ես հաւատում եմ որ Բուրունը խնդրած է նկարի համար սիրուն երեխայ գտնել, Աֆանասիչն էլ է Ֆէնիան մատնանշել որովհետեւ իրօք Ֆէնիան սիրուն է։ Ես նոյնիսկ ուրախացայ, կարծելով որ Բուրունի նկարելուց յետոյ, իբրեւ յիշատակ կը խնդրեմ։

(Շարունակելի)

———

բանքի այդ փայլուն ապացոյցին համար, զոր շատ կը գնահատեմ։

Քանի մը օր առաջ ինձ այցելեց պարոն Արպաս Քարտիօրա խնդրելու համար որ ճարոնական կառավարութեան հաղորդեմ ձեր մեկնումի մասին եւ կայսեր տեսակցութեան համար միջնորդեմ։

Ես անմիջապէս դիմեցի պէտք եղած տեղը և կայսեր հետ տեսակցութիւնը ունենալու արտօնութիւնը ստացայ։ Տեսակցութեան օրը ձեզի կը հաղորդուի կայսերական պալատին նախարարին կողմէն։ Ասիթէն օգտուելով կրկին շնորհակալութիւնս եւ անձամբ յարգանքս ձեզ կը յայտնեմ։»

* * *

Ռուսական ռուս թերթը այս նամակը հրատարակելով՝ կ'աւելցնէ.

«Ու այս կը կատարվի ժողովուրդ մը որուն իշխանութեան տակ կապրին տաս միլիոն սլաւոններ և ան ալ այնպիսի տեղն մը, երբ սլաւոններու պաշտպանը դժբախտութեան մէջ կը գտնուի։

«Այդ կը կատարուի ժողովրդի մը կողմէ որ ազնիւ բլլալու յաւակնութիւնները ունի. ժողովուրդ մը որուն քիչ առաջները Ռուսիոյ ցարը եւ դարձուց Ութոչի սուրը. ժողովուրդ մը որուն Վեհապետը Ռուսիոյ հետ ձեռք ձեռքի տուած յանձն առած են Մակեդոնիան նոր կեանքի վերակոչել։ Գերմանական եւ Ունգարական թերթերը կը լռեն այժմ եւ իրենց լռելյան համաձայնութեամբ կը միանան ունգարական պատգամաւորութեան հետ։ Բայց ինչ եղաւ, երբ 1888 թուին հարաւային սլաւոններու անմահ առաքեալ Շթրոսմայեր Քիէվ ղրկեց իր հռչակաւոր շնորհաւորական հեռագիրը։ Ինչ շանթեր որոտացին այն ատեն Շթրոսմայէրի գլխուն... Բայց ան Վիէննա կոչուելով՝ իր ըրած քայլին համար պատասխան տալու՝ կայսեր պատասխանեց՝ «իմ խիղճս մաքուր է՝» Բայց հիմա արդեօք մաքո՞ւր է ունգար ժողովրդին սիրտը։ Այդ յայտնի կըլլայ երբ Ունգարիոյ սլաւ ժողովուրդները արթննան իրենց քունէն։ Աստուծու օգնութեամբ այդ ժամանակին կը հասնինք։

«Այն ատեն պիտի տեսնանք ով պիտի ունգարացիներուն պատուաւոր սուր հրամցնէ»։ . . .

Իսկապէս դժբախտ է ռուս ժողովուրդը, որ անոր մամուլը այսչափ կը յուզուի մաճառական նուէր սուրի մը պատճառով։ Ֆրանսայիք ալ Շթոսէլի կարծեմ սուր նուիրեցին, կամ նուիրել կուզէին. ճարոնացիք հիշ տէրը չեղան։

ՌՈՒՍ ԶՕՐԱՑ ԳԼԽ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԻՆՐ

Անցեալները մեր ընթերցողներուն հաղորդեցինք որ Լինեվիչ, Գուրբաթին եւ միւս զօրավարները հաշտութեան լուրը առնելուն պէս Ցարին հեռագրած էին որ հաշտութեան բանակցութիւնը մտնելը անժամանակ է, ժանաւանդ հիմայ երբ ռուս զօրքը ինքզինքը պատրաստ կ'զգայ պատերազմը շարունակել և ոչ նուաստացուցիչ հաշտութեան մը համար նպաստաւոր պայմաններ ստեղծել։

Գլխաւոր հրամանատարներուն եւ բոլոր զօրավարներու այդ հեռագիրը թէ ցարին եւ թէ ժողովրդին վրայ լաւ ազդեցութիւն գործեց որոնք իրենց ազգայնական հպատակութիւնը քիչ մը շոյուած տեսան։

Հիմակ ալ «Լը Ժուրնալ» թերթը հետեւեալը կը գրէ Լինէվիչի մասին։

«Մեր մասնաւոր թղթակիցը Կունջուլինի մէջ յաջողեր է խոսակցել ժէնէրալ Լինէվիչին հետ եւ կը հեռագրէ որ հրամանատարը դրական բան մը չը գիտեր հաշտութեան մասին։ Իսկ զօրքին համար կայցտարարէ—բացարձակօրէն ձեզի կը յայտարարեմ որ զօրքը այսօր այնպիսի փայլուն վիճակի մը մէջ կը գտնուի, որ մենք պիտի կարենայինք յարձակողական դիրք բռնել։

Հրամանատարը կը կարծէ որ Ռուսիա շատ շուտ համաձայներ է հաշտութեան բանակցութիւններու մէջ մտնալ։ Եւ այդ ան կը բացատրէ կայսեր ազնիւ զգացումներով, որը կրնայ հաշտութիւն կնքել միայն արիւնհեղութիւնը դադրեցնելու համար։

Վերջը հրամանատարը յայտարարեր է որ ինքը մեծ հաւատք ունի պատերազմին ի նպաստ ռուսներու վերջաւորութեան վրա։ Ու մեծ ճակատամարտը չը պիտի ուշանայ։ Ռուս զօրքը իր ազգայնական զգացումներուն մէջ ինքզինքը վիրաւորուած կը զգայ հաշտութեան մասին եղած լուրերը լսելով եւ կուզէ որ պատերազմէ. բայց ի հարկէ պիտի հպատակի կառավարութեան որոշումին։

Իրօք մեծ ճակատամարտ մը սկսուելու վրայ է.

Չը նայելով որ ճարոն զինուորական նախարարութիւնը Մանչուրիոյ զօրաբանակներուն հաղորդած է հաշտութեան բանակցութիւններու խնդիրը. բայց եւ այնպէս ճարոնի զօրաբանակները եռանդուն գործունէութեան մը մէջ են։

Ու այս ճակատամարտը տեղի ունենալէն վերջն է որ պիտի հասկնանք թէ Լինէվիչին կարծիքները, իր զօրքի մասին որքան ճիշտ են։

Ի հարկէ աւելի գերագասելի էր որ հաշտութիւնը տեղի ունենար առանց նոր ճակատամարտի մը որ կրկին տասնեակ հազարներով մարդկային կեանքեր պիտի խլէ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Սուլթանը նոր իրատէով մը «Հաթթիհ» միւսիւլմաններուն կը պատուիրէ հրաժարիլ ոգելից ըմպելիքներէ. չայցելել թատրոնները, ուր անբարոյական ներկայացումներ կը տրուին. և թերքուհիներուն չը հագնել եւրոպական զգեստներ և չայցելել հանրային տեղեր։

Կերեւի թէ ոստիկանութեան հրաման տրուած է խստիւ պատժել այդ յանցանքներու մէջ գտնուող այրերը և կիները։ Թուրք քաղաքակրթուած դասակարգը, որ լաւ կըմբռնէ թէ այդ արգելքները բարոյականը պահպանելու համար չեն. այլ ոստիկանի թուրքերը յարաբերութիւն չունենան օտարականներու հետ և չը տեղականան կառավարութեան վատ գործելու հետ, շատ դժգոհ է այդ պարբերական արգելումներէն։

Յունիս 13 ին Պոլսէն կը հեռագրեն որ զինուորական դպրոցի դասատու Բէյիթ փաշան ձերբակալուած է Ֆէհմի փաշային մերձաւոր և նաւ մը փոխադրուած։ Ու առակ մը ոչ ոք գիտէ թէ փաշային հետ ինչ եղած է։

— Յունիս 12 ին Պոլսէն կը հաղորդեն որ Աւստրօ Ունգարական գեսպանը 6 պետութեանց կողմէն նօթա մը առեր է Բ. Դրան, պնդելով որ տէրութեան կողմէն Մակեդոնիոյ ելեւմուտքը բարեկարգելու համար առաջարկուած ծրագիրը ընդունուի։

ՌՈՒՍԻԱ

Լոդզի մէջ, յունիս 11 ին տպագրատամքնելը կոտրտեր են 800 լապտեր և խորտակեր են օդիի բոլոր տէբօզիտները։ Մէկ քանի հարիւրի չափ վիրաւորեալներ և 50 հոգիի չափ սպաննուածներ կան։

Այսօր բոլոր փողոցներում հրաձգէնի ձայներ կը լսուին, հաւանական է որ վաղը խռովութիւնները կրկնուին։

Քաղաքին մէջ տարտափը մեծ է. քաղաքացիները արագութեամբ քաղաքը կը թողուն։ Դրամատուները գոյծառնութիւնին դադրեցուցին։ Կը վախցուի թէ շատ սնանկութիւններ պիտի պատահին։

— «Նով. Վրէմիա» թերթը հրատարակած է Ստաւրաբոլ քաղաքի կոչը, որով կը յայտարարեն թէ անպատուաբեր հաշտութիւն չեն ուզեր, ու պատրաստ են հարստութիւն, ընտանիք զոհել յաղթութիւն ձեռք բերելու համար։

— Կառավարական պաշտօնական թերթը հրատարակած է Ռուբսք քաղաքին ազնուականութեան մէկ հեռագիրը—ուղղուած ցարին, որով ազնուականութիւնը կը բողոքէ հաշտութեան առաջարկներուն դէմ և ցարէն կը խնդրեն պատերազմը շարունակել, պատուաւոր ազատութիւն մը ձեռք բերելու. խոստանալով ամեն բան զոհել այդ նպատակին համար։

— Սախալինի մէջ անիշխանական դրութիւն կը տիրէ։ Կեանքի անհրաժեշտ նիւթերը կը պակսին։ Թալանները օր աւուր կը բազմապատկուին։

Շատ մը աքսորականներ որ բնակութիւն հաստատած էին հարաւային Սախալին, պատրաստուեր են իրենց հողերը թողուլ հեռանալ։

— Լիսպոան կը հաղորդեն որ յունիս տասին փախած բանտարկեալները աւազակներու ամբոխի մը աջակցութեամբ քարկոծեցին ոստիկանատուն։

Կարգը արագութեամբ վերահաստատուեցաւ։ Ոակայն գործադուլներու ամբոխ մը երեք օրէ ի վեր քաղաքը կը թալանէ, որուն պատճառով քաղաքին մէջ սարսափ կը տիրէ։

— Փիտսմիրի նահանգին մէջ Իրեմիից գիւղին հրէաներուն տարները թալանի ենթարկուեցաւ տօնավաճառի ատեն. զոհեր կան։ կարգը շուտով վերահաստատուեցաւ։

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Անգլիական թերթերը ռուսական զօրքերու կացութիւնը Կունջուլինի քովերը շատ ծանր կը գտնեն։

— Թօքիոյի մամուլը կը գտնայ որ Լինեվիչին կացութիւնը աւելի վտանգաւոր է ռուսներուն համար քան Քուրոքաթքինինը էր. Մուքտէնի քով։ Եթէ ռուսները պաշտպան են երկաթուղիին գիծը այն ատեն պարտաւորուած պիտի ըլլան շատ մը տեղեր դիւրութեամբ զիջանիլ։

— Ռեթերսպուրկէն կը հեռագրեն որ ծովակալ Ռոժտէնտվենսքիյ հալիւ երեք ամսէն առողջանալ։ Ներքագոթով խենթեցած է։

— Բոքթ Արթուրի ճարոնական ծովային իշխանութիւնը կառավարութեան հաղորդեր է որ ընկղմած ռուսական Բայան զրահաւորը ծովէն հաներ են։

ԿՎԱՃԱՌԻ

Վառնա, կեդրոն փոդոցի մը մէջ մէկ ու կէս յարկով քարաշէն հաստատուն մը չինուած 95 քառակուսի մէթր տարածութեան վրայ, 245 քառ. մէթր պարապ հողով։ Ունի 5 սենեակ, մէկ խոհանոց, լուացարան, հոր եւ ամեն ինչ որ անհրաժեշտ են ընտանիքի մը հանգստութեանը համար։

Փափագողք կրնան դիմել «Շարժումի» խմբագրութեանը։

Շումլայի «Պեսո Պուլկարացի» ընթերցարանին մէջ կը ծախուի Հայ Ցեղ. Դաշնակցութեան բարձրաքանդակ ոսկեզօծ զինանշանը գաճէ խիստ չքեղ պատրաստուած 49—43 սն. մեծութեամբ. Արձանագործ Պ. Գորէն Փափազեանէ. որ գեղարուեստական գնահատելի գործ մըն է։

Կարժէ որ ամեն հայ ուդաչնակցական ընկեր ունենայ ան իր սենեակին մէջ։

Դինն է 10 ֆրանք կանխիկ, դիմել Շումլայի „Պեսո Պուլկարացի" ընթերցարանի վարչութեան։

Печатницана П. Глушковъ и С-ие, Варна